Պարույր Սևակ

Անվերնագիր 14

Ծաղկանկար շալը ուսիդ՝
Ձեր տան կտրին նստում ես դու,
Ծով աչքերով կանչում ես դու
Տղային ձեր հարևանի:
Բայց նա ինչպե՞ս և ո՞ւր գա նա,
Երբ հոնքերով սաստում ես դու,
Խեղճ տղային տանջո՛ւմ ես դու:
Նա չգիտի, թե ինչ անի:
Իսկ հետո էլ՝ ուսերիցը դ
Շալը դ ահա առնում ես վար,
Խաղում ես դու ծոպերի հետ,
Մեկ էլ նրա՛, նրա՛ հոգու,
Որ չգիտի՝ գա՞, թե չգա,
Եվ մոլորված խեղճ ու շվար՝
Քեզ պես ծաղկած իրենց այգու
Դռնակն է լոկ բացում-փակում:
Երբ աչքերով կանչում ես դու
Ու հոնքերով սաստում նրան,
Դու չգիտե՛ս, չէ՛, չգիտես՝
Ոնց ես հանում նրա հոգին:
Ա՛խ, ի՞նչ անի, դե ի՞նչ անի

Հարևանի ձեր խեղճ տղան.
Փոքրիկ էլ չի, որ վեր կենա,
Մոր մոտ գնա
ո՛ւ բողոքի:

23.VI.1946թ. 17.VII.1953թ.
Երևան Նավչալու